

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

**ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՇՈՒՇԻՈՒՄ
ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՉԻՉՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Բանալի բառեր՝ Ավետարանական քարոզիչ, Շուշի, Բագել, քարոզիչ, արևելահայերեն, տպագրություն:

Ներածություն. 1822 թվականին Բագելի Ավետարանական¹ Քարոզչական Ընկերությունը ռուսական իշխանություններից թուլյտվություն է ստանում Կովկասում կենտրոններ, դպրոցներ, տպարաններ հիմնելու՝ տեղի «հեթանոս և մահմեդական» բնակչության շրջանում «գիտություն բանին Աստուծոյ» տարածելու համար²: Այդ նախաձեռնությունը գլխավորում էին եվրոպացի հոգևոր

* Մեռուպ Մաշտոցի անվան Մատենադարան, ք.գ.ք., հոդվածը ներկայացնելու օրը՝ դեկտեմբերի 8, 2022, գրախոսելու օրը՝ դեկտեմբերի 10, 2022:

1 Հոդվածում օգտագործվել է ավետարանական եզրը՝ հավատարիմ մնալով ֆարոզչական ընկերության անվանմանը:

2 Հ. Դովկասեանց, *Բողոքականության Կովկասու հայոց մէջ (պատմական նիւթեր)*, Թիֆլիս: Մ. Ռօտինեանցի տպ., 1886, էջ 2, նաև՝ Լէօ, *Պատմության Դարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր դպրոցի, 1838-1913*, Թիֆլիզ, Տպարան Ն. Աղանեանի, Պօլից. 7, 1914, էջ 87: Նշենք, որ ավետարանական ֆարոզիչների նախաձեռնությամբ հրատարակված հետագա գրականությունը ևս խոսում է նրանց ֆարոզչական այդ ուղղվածության մասին. մասնավորապես, «Աւետարանի գօրութիւն կամ մին Արաբ ծառայի պատմութիւն որ Քրիստոս հաւատքովն երանելի էլաւ», ((թարգմանութիւն) ի Մոսկով, ի Տպագրատան Հայկական եւմարանի Տեարց Լազարեանց, 1830), գիրքը, որ տպագրվել է Ծայրագույն վարդապետ Սալլանթեանի հրամանով, ֆարոզչական բնույթի աշխատանք է, որտեղ հարց ու պատասխանի միջոցով խորհուրդ է տրվում մուսուլմանին ֆարոզելիս օգտագործվող հնարքների բովանդակությունը: Այն մուսուլման արաբի Բրիտանություն ընդունելու, նրա բռնած ճիշտ ուղու բացատրությունն է և Բրիտանյա համայնքի կողմից նոր Բրիտանյային ընդունելու պատմությունը: Նմանատիպ ստեղծագործություն է նաև գիրքը, որը ֆարոզիչները հրատարակեցին կրկին Լազարյան եւմարանում և որի մէջ զետեղվեցին Դուրանի որոշ հայատառ հատվածներ և թարգմանություններ, տե՛ս Համառօտ քննութիւն Քրիստոնէական հաւատոց և մահմեդական կրօնի: Յաշարհաբար լեզու շարադրեալ յումեմնէ հոգեհիրէ ի պետս պարզամտաց, Մոսկով, տպ. Լազարեան եւմարանի, 1831, էջ 212-262: Քրիստոնյա-մուսուլմանական վիճաբանությունների ավանդույթում դեռևս Ը-Թ. դարերից ձևավորված գործելակերպ էր Ավետարանների «թերությունները» ի ցոյց դնելով կրոնափոխության ֆարոզչություն տանել (տե՛ս A. Tiburcio,

գործիչներ լեհ Ֆելիցիան Զարեմբան և գերմանացի Ավգուստ Դիտրիխը (1797-1855 թթ.): 1823 թվականին Բագելի քարոզիչները, Շուշիում հաստատվելով, պարարտ հող գտան հայոց մեջ կրթական գործի կազմակերպման համար. նրանք ծրագրում էին իրականացնել հայերի շրջանում սուրբգրային գրականության տարածում, իսկ հայ կիրթ երիտասարդությանը ներգրավել իրենց առաջնային ծրագրի՝ ոչ-քրիստոնյաների շրջանում ավետարանական քարոզի և նրանց կրոնափոխ անելու գործում³: Բագելի Ավետարանական Քարոզչական Ընկերությունը մշակել էր քարոզչական լեզվական քաղաքականություն, որն առաջին հերթին իր քարոզիչներից պահանջում էր տեղական լեզուների իմացություն, որոնցով պետք է իրականացվեր նաև սուրբգրային գրականության հրատարակություն: «Հասարակ լեզվով» սուրբգրային գրականության տարածման համար քարոզիչները նախաձեռնել էին դրանք գրաբարից աշխարհաբարի փոխադրելու գործը, որին լայն թափ հաղորդելու համար 1827 թվականին Շուշիում բացված ուսումնարանի հայ սաներին վարժեցնում էին գրաբարից աշխարհաբար և՛ հակառակը, փոխադրություն անել: Ավետարանական քարոզչության լեզվական քաղաքականության մասին, որը հիմքում հասարակ ժողովրդին հասանալի և մատչելի լեզվով սուրբգրային գրականության մատուցումն էր, կարգում ենք «Աւետաբեր եւ շտեմարան պիտանի գիտելեաց» ամսագրի «Աւետարանը ինչպէս քարոզուելու է» հոդվածում⁴. «Աւետարանը քարոզուելու է՝ շատ պարզ ու բացայայտ ոճով: Քարիոզիչներէն ոմանք իրենց ունկնդիրներուն մեծ մասին ընդունակութիւնն ու իմացականութիւնը չափէն աւելի բարձր կը բռնեն: Իրենց զրուցուածքին ոճը՝ օգտակար արդիւնք մը յառաջ բերելու չափէն շատ աւելի բարձր է: Խօսքերնին անոնց մտքին ու սրտին ազդելու տեղը՝ անհասկանալի ձայն մը ահանջնուն կը զարնէ, կ'անցնի, կ'երթայ: Մինչև որ բացատրութիւնները պարզ չըլլան, իմաստները կարճ և յստակ, ժողովուրդին չափահաս մասին շատը՝ և տղաքը չեն կրնար միտքերներուն մէջ անոնց զրուցածը բռնել, կամ՝ քարոզէն օգուտ մը քաղել: Քարոզած խօսքը՝ անծանօթ օտար լեզուով խօսուածքի մը պէս պիտի գայ անոնց: Ան քարոզիչները՝ որոնք որ շատ մեղաւորներ արդարութեան ճամբուն դարձուցին, շատ պարզ ոճեր կը գործածէին. իրաւ է որ անոնցմէ ոմանք՝ ուսեալներուն և բժախնդիրներուն դատումովը պարսաւանաց ենթակայ եղան, շատ հասարակ ու խօսակցութեան

“Muslim-Christian Polemics and Scriptural Translation in Safavid Iran: ‘Ali-Qoli Jadid al-Eslām and his Interlocutors,” Iranian Studies 50/2, Routledge, 2017, p. 256), ինչը գործադրվում էր նաև իսլամի սուրբ գիրքը կրոնափոխության փարոզության ծիրում օգտագործելու ֆամար:

³ Ալեք, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր դպրոցի, 1838-1913, էջ 89:

⁴ 1855, հմբ. 8, թիւ 4:

ոճին պէս պարզ և ընտանի խոքեր գործածելնուն համար: Բայց աս ալ կայ որ՝ ճառ մը՝ քարոզ մը՝ ու որ և իցէ խօսք մը, մինչև անգամ տղոց հասկըցողութեան աստիճանին կրնայ ծռիլ՝ առանց գեղջուկ ու կոշտ ռամկական ըլլալու: Ահա աս ըլլալու է ամեն քարոզիչին դասն ու նպատակը»:

Լեզվական այս քաղաքականութեան իրագործման ճանապարհին 1827 թ. Շուշիում հիմնադրեցին տպարան, որտեղ սկսեցին արևելահայերեն սուրբ-գրային գրքերի հրատարակությունը⁵: Ընդ որում, նույն այդ գրականությունը տպվում և վերատպվում էր Լազարյան ճեմարանի տպարանում⁶, Կալկաթայում⁷,

5 Շուշիում 1827-1835 թվականներին տպագրված գրքեր տե՛ս **Հայկ Գավթյան**, *Հայ գիրքը 1801-1850 թվականներին, Մատենագիտություն*, իմպ. Ն. Ս. Անասյան, Երևան, 1967: Ընդ որում, Սիրտ մարդոց, որ է տաճար աստուծոյ կամ գործարան սատանայի, Տասն պատկերներով առաջի դրած. Որ ամէն մարդ հեշտ իմանալ և միտք առնելով քրիստոնէական կեանքին հետևելոյ համար ջանք անէ (Թարգմանութիւն: Ի հայրապետութեան Տն Յովհաննու Կարբեցոյ սրբագնաստուրբ Կաթողիկոսի ամենայն հայոց: Հրամանա Տ[եա]ն Բաղասասարայ իշխանագնի Ջալալեան սրբազան Արեւախկոպոսի և մետրոպոլիտի հայոց համայն աղոսանից, Շուշի, 1833) գրքի վերջին էջում «Շուշի բերդումն աւետարանական ժողովքի տան մէջն էս հետևող գրեանքս էլ ծախվում են» սկսվածով զետեղված է ավետարանական ֆարոզիչների տպագրած 23 ամուն գրքից բաղկացած ցանկ: Ընդ որում, գրքերի ցանկեր տեսնում ենք *Ժամանակի վերջն* (Թարգմանութիւն, Շուշի, 1832), *Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար* (Թարգմանութիւն, Շուշի, 1832) և այլ գրքերի վերջին էջերին: Շուշիում ավետարանական ֆարոզիչների հաստատման և տպարանի մասին տե՛ս **Ս. Պետոյան**, «Շուշիում բազելյան բողոքական ֆարոզիչների հաստատումը և տպարանի հիմնադրումը», *Եվրոպական համալսարան*, Երևան 10 (02), 2019, էջ 372-384, նույնի՝ «Բազելյան բողոքական ֆարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827-1835 թթ.)», *Հայագիտության հարցեր* 1, Երևան, 2021, էջ 45-65, իսկ տպագրական գործունեության մասին տե՛ս նույնի՝ «Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին», *ԲՄՅՅ*, Երևան, 2020, էջ 302-316:

6 Ըստ Կովկասի կառավարիչ պրն. Ռոզենի տեղեկագրի, Մոսկվայում և Շուշիում ավետարանական ֆարոզիչների գործունեության արդյունում՝ 1827-1833 թվականների ընթացքում տպագրվել էր «11679 օրինակ հայերէն, 728 օրինակ պարսկերէն, 147 օրինակ թուրքերէն և 100 օրինակ երբայերէն գրքեր», **Հ. Ղուկասեանց**, *Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ (պատմական նիւթեր)*, էջ 33: **Ալեք. Պատմութիւն Գարբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրոցի, 1838-1913, էջ 93: Մոսկվայի Լազարյան նեմարանում տպագրված գրքերից էին օրինակ՝ *Երեք խոսակցութիւնք մին քահանայի մին աշխարհական մարդոյ հետն: Փրկութեան ճանապարհի համար*, Թարգմանութիւն, Մոսկվա, Լազարյան նեմարան, 1830 (նույն գրքովը 1844 թվականին վերատպվել են Զմյուռնիայի ավետարանականները), *Նոր Կտակարան տեսն Յիսուս Քրիստոսի, ըստ հարազատ նախնի թարգամանութեան: Հանդերձ հաւատարիմ բացայայտութեամբ ի հասարակաց լեզուի*, Մոսկվա, տպ. Լազարեանց նեմարանի, 1834 և այլն:**

7 Կալկաթայում վերատպված գրքերի շարքից են, օրինակ՝ *Կարճատու աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար* (Թարգմանութիւն: Ի հայրապետութեան տեսն Յովհաննու Կարբեցոյ սրբագնաստուրբ կաթողիկոսի Ամենայն Հայոց: Հրամանա տեսն Բաղասասարայ իշխանագնի Ջալալեան սրբազան արեւախկոպոսի և մետրոպոլիտի Հայոց համայն Աղոսանից, Շուշի, 1822), գիրք վերատպվել է Կալկաթայում՝ 1841 թվականին, ի տպարանի Մկրտոչ Միսիոնարաց ի Կալկաթա, *Յորդորմունք սուտ ասող մարդկանց համար* (Շուշի, 1832), գիրք վերատպվել է Կալկաթայում՝ 1841 թվականին, ի տպ. Մկրտոչ Միսիոնարաց ի Կալկաթա,

Զմյուռնիայում⁸, ինչի մասին տեղեկությունը զետեղում էին հենց գրքերի կազմերի վրա և տիտղոսաթերթերին: Ավետարանականների գիտահրատարակչական գործունեության կարևոր արգասիքներից էր արևելահայերեն գրականության տպագրությունը և տարածումը: Լեոյի հաղորդմամբ, նրանք նույնիսկ ձեռնարկել էին Նոր Կտակարանի թարգմանությունը ըստ գավառների բարբառների (կարծում ենք, նկատի ունի աշխարհաբար արևելահայերենը – Ն. Կ.), որի թույլտվությունը ստանալու համար 1830 թվականին Զարեմբան իր թարգման և օգնական Միրզա Ֆարուխի⁹ ուղեկցությամբ ժամանում է էջմիածին, սակայն միաբան Յովհաննէս վ. Շահխաթունեանի միջամտությունների¹⁰ արդյունքում նրանք թույլտվություն չեն ստանում¹¹:

Ավգուստ Դիտրիխի նամակը. Վերջին իրագարծություններին նախորդել է 1829 թվականին գրված Ավգուստ Դիտրիխի նամակը, որը պահվում է Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի արխիվատանը և ուղղված է «Տեառն Աբրահամ

Նոր Կտակարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (ի տպ. Մկրտիչ Մխիթնաբաց, ջանիւմ և ծախիւմ Ամերիկայի և Օտարականաց Աստուածաշունչի ժողովին, Կալկաթայ, 1839, Առաջին անգամ տպեալ առանց քնարների վկայութիւններով, ի տպագրատան Հայկական քննարանի Տեառց Լազարեանց 1834, ի Մոսկով. ՌՄՁԳ), և այլն:

⁸ 1838 թվականից ավետարանականները բավականին շատ արձակ և չափածո կրոնական բովանդակությամբ գրականություն են տպագրում Զմյուռնիայում, տե՛ս **Հայկ Դավթյան**, *Հայ գիրքը 1801-1850 թվականներին*, էջ XLVIII:

⁹ *Հարություն Գալստյան*. նա 1805 թվականին 5-6 տարեկանում գերի է ընկնում Ատրպատականի Աբբաս Միրզայի մոտ, դառնում մահմեդական և որպես ծառա ընծայվում Ամիրխան սարդարին: 1820-ականների պարսից գորբի հետ մտնում է Արցախ, հիշելով հայրենի տունը, փախուստի է դիմում իրանցիներից և հաստատվում Շուշիում: Ավետարանների մոտ կրկին ընդունում է քրիստոնեությունը և դառնում նրանց օգնականը, տե՛ս **Հ. Դուլասեանց**, *Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ (պատմական նիւթեր)*, էջ 12-14: Երբ 1838 թվականի Շուշիում բացվում է Արցախի հոգևոր թեմական դպրոցը Հարություն Գալստյանը կամ ֆարոխ Ամիրխանեանը այնտեղ դասավանդում է պարսկերեն, տե՛ս *Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75 ամեակը*, Շուշի, տպ. Բ. Տեր-Սահակյան, 1913, էջ 12-13:

¹⁰ Ավետարանականները դիմում են Մայր Աթոռի «Բարձրագույն հորհրդարանի տուրք ժողովին», որը խնդրի մասին վճիռ կայացնելու իրավունք թողնում է Քիչևն հեռացած հոգևորական գործերի ծայրագույն կառավարիչ Ներսես Աշտարակեցուն: Վերջինիս նամակից հայտնի է դառնում, որ նա դեմ չէ Ավետարանի տպագրությանը: Զարեմբան ստանում է նաև Բարձրագույն հորհրդարանի գրավոր համաձայնությունը, սակայն խորհրդարանի երկու անդամներ այդ ժամանակ լինում են Երևանում, Շահխաթունեանը հիշյալ անդամներին կարողանում է համոզել ավետարանականների գործունեության վտանգավորության մեջ, և նրանք դեմ են արտահայտվում արևելահայերեն ավետարանի տպագրության նախաձեռնությանը, տե՛ս **Արիստակես Եպիսկոպոս Սեբրակեան**, *Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրությունը*, Ս.-Պետերբուրգ, տպ. Յ. Ի. Լիբերմանի, 1898, էջ 225-231:

¹¹ **Լեօ**, *Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրոցի, 1838-1913*, էջ 94:

գերիմաստ վարդապետին»։ Ըստ Ղուկասեանցի, Դիտրիխը գրաբար էր սովորել Մոսկվայում Սալլանթեան Միք. վարդապետի մոտ¹²։ Նամակը գերմանացի քարոզիչը գրել է գրաբարով, քանի որ ուղղված է եղել Հայոց հայրապետին և հայ եկեղեցու վարդապետին, ստորագրված է «խոնարհ եղբայրակից Օգոստոս Դիտրիխեան»։ Նամակում (էջ 1) ողջունի և փառաբանական խոսքեր են ուղղված Հայոց հայրապետին և անդրադառնում է վեց ամիս առաջ դեռևս Տիփլիսում (Թիֆլիս) նրան ուղղված և անպատասխան նամակին։ Այստեղ պետք է արձանագրել, որ խոսքը Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Չորագեղցիի մասին է, որը 1830 թ. դեկտեմբերի 8-ին հրաժարվեց կաթողիկոսական աթոռից։ Հաջորդիվ (էջ 2) նշվում է, որ նամակը ուղարկում է «արժանապատիւ Տէր Յօհաննէսի» միջոցով։ Նամակին կից ուղարկում է նաև իր թարգմանած Ավետարանն ըստ Մատթեոսի «ի հասարակաց լեզուի» և խնդրում պատասխանել՝ արդյո՞ք համապատասխանում է գրաբար օրինակին (որն, ըստ ամենայնի, նույնպես կցված է եղել – Հ. Կ.)։ Նա իր ջանքերը բացատրում է այն հանգամանքով, որ «հասարակ ժողովուրդք» անմասն են Աստվածաշնչին, քանի որ չգիտեն գրաբար։ Իր փոխադրությունը համարում է «ըստ ոճին Արարատեան գաւարաց (այսպէ՛ս) այն որ խօսի յերկիրն էջմիածնի, Նախիջևանայ, Սիւնիաց, Արցախայ, Աղուանից, Վրաց և Թուսաց, վասն զի լեզու օսմանական հայոց այլ է և ի նմին ևս թարգմանութիւն արարեալ է»¹³։ Դիտրիխը (էջ 3) համարում է, որ «...բանն Աստուծոյ և այսր աղագաւ ամենայն զգուշութեամբ հարկ է վարել ընդ նմին»¹⁴, հիշատակում է Սուրբ Սահակին և Մեսրոպին՝ «ժողովուրդն ի փրկարար գիտութիւն սուրբ գրոց»։ Գերմանացի քարոզիչն ավարտում է նամակը պատասխանի ակնկալիքով, որը խնդրում է ուղարկել կրկին Տէր Հովհաննէսի միջոցով (տե՛ս ԲՆԱԳԻՐԸ)։

Նամակ-փաստաթղթի պատասխանը, ցավոք, մեր ձեռքում չէ, սակայն, հայտնի է, որ 1831 թ. Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում տպագրվել

¹² Նամակը հայտնաբերել ենք 2022 թ. փետրվարի 2-9-ը Նոր Ջուլայի Ս. Ամենափրկիչ վանքի արխիվատանը ուսումնասիրություններ կատարելիս։ Գործուղումը իրականացրել ենք 21Տ-6Յ125 թեմատիկ ծրագրի շրջանակներում։

¹³ Ս. Պետոյանը գրում է, որ Դիտրիխը սկսել էր Նոր Կտակարանի արևմտահայերենից արևելահայերեն փոխադրությունը, տե՛ս «Նոր փաստեր Շուշում տպագրված առաջին գրքերի մասին», էջ 304-305։ Ըստ մեր ներկայացրած փաստաթղթի, «ի նմին ևս թարգմանութիւն արարեալ է»-ը նշանակում է նմանատիպ (այսինքն՝ արևմտահայերենով) արված թարգմանություն։ Կարծում եմ, փաստաթղթի տեղեկությունը պետք է հաշվի առնել խնդրի արժարժման պարագայում։

¹⁴ Ավետարանականների զգուշավորությունը վերաբերում էր նաև կրոնական գրականության լեզվական մատչելիությանը և այն ստուգելու համար հանդիպումներ էին կազմակերպում տեղի բնակիչների հետ, տե՛ս Ս. Պետոյան, «Նոր փաստեր Շուշում տպագրված առաջին գրքերի մասին», էջ 305։

է «Սուրբ Աւետարան ըստ Մատթէոսի: Ըստ հարազատ նախնի թարգմանութեան, հանդերձ հաւատարիմ բացայայտութեամբ ի հասարակաց լեզու (գրաբար և աշխարհաբար)» գիրքը¹⁵: Կարծում ենք, փաստաթուղթը վերաբերում է հենց այս հատորի տպագրութեանը և հեղինակը Ավգուստ Դիտրիխն է, որի մասին տիտղոսաթերթին որևէ նշում չկա: 1831 թ., երբ արդեն Հովհաննես Ը Կարբեցին ընտրվել և հաստատվել էր Հայոց կաթողիկոսի գահին, տպագրված գրքի կազմին կարողում ենք՝ Խ Հայրապետութեան Տեառն Տեառն Եփրեմայ Արժանընտիր և Աստուածարեալ Կաթողիկոսի ամենայն Հայոց և Ասպետի, ինչը նշանակում է, որ գրքի հրատարակության համաձայնությունը տրվել էր դեռևս 1829 թվականին գործող Եփրեմ Ձորագեղցի կաթողիկոսի¹⁶ (1809-1830 թթ.) կողմից, ում էլ ուղղված էր Դիտրիխի նամակը¹⁷:

Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի արխիվատան «Շուշի» թղթապանակում պահվող այս փաստաթուղթը հավելյալ փաստեր է տալիս Շուշիում ավետարանական քարոզիչների լեզվական քաղաքականության, գիտահրատարակչական գործունեության և մասնավորապես արևելահայ աշխարհաբար լեզվի տարածման և այդ լեզվով հրատարակչության զարգացման գործում նրանց ունեցած ներդրման մասին:

ԲՆԱԳԻՐ

Գերյարգոյ Տ[եառ]ն Աբրահամ՝ գերիմաստ վարդապետի
Ողջոյն ի Տէր մեր Յ[իսու]ս Ք[րիստո]ս:

[1] Ա[ստուա]ծ հօգօր և ողորմած՝ որ հասոյց գՁեզ ընդ սրբազան Հայրապետի ի մեծավայելուչ աթոռն սրբոյն Լուսաւորչայ՝ օրհնեալ լիցի գոհութեամբ և հանապազօրդ փառաբանութեամբ վասն ողորմութեանն՝ զոր եցոյց եկեղեցոյն Հայաստանեայցդ: Նաև շնորհօքն հոգոյ իւրոյ լցուցէ զկառավարիչս և զվարդապետս եկեղեցոյ՝ զի զամենայն աշխարհական իրս և փառս թողլով՝ ս[ուր]բ նախանձու վերսին շինեսցեն զաւերեալ տա-

¹⁵ Հ. Գավթյան, Հայ գիրքը 1801-1850 թվականներին, էջ 183:

¹⁶ 1813 թվականին ստեղծվեց Ռուսաստանի Աստվածաշնչյան Ընկերությունը, որի նպատակն էր Ռուսական կայսրության տիրապետության տակ գտնվող բոլոր ժողովուրդների լեզուներով սուրբգրային գրականություն տպագրել ու բաժանել: Ռուսական կայսրության տարբեր ազգերի հոգևոր առաջնորդներ անդամակցեցին այդ ընկերությանը և աշակցում էին դրան: Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Ձորագեղցին ևս դարձավ այդ ընկերության փոխնախագահներից մեկը՝ աշակցելով արևելահայերեն կրոնական գրականության ստեղծմանը, տե՛ս Ա. Ղազարյան, Ռ. Ն. Առնյան, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 1999, էջ 63:

¹⁷ Գրքի անվանաթերթին հիշատակված է նաև՝ Յառաջնորդութեան Ռուսիաբնակ Հայոց Առաքելաշախիղ Տեառն Ներսեսի Սրբազան Արքեպիսկոպոսի և Ասպետի: Այս մասին տե՛ս Ս. Պետոյան, «Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին», էջ 306-307:

հարն Աստուծոյ՝ որ է ժողովուրդն ֆրիստոնէից, և սուրբ արիութեամբ ֆարոզեցին զվէմն փրկութեան, որ է յայտնեալ գլորեալ մեղաւորացն ի լուսարար սուրբ աւետարանի իւրում: Բագուկ Տեառն արասցէ զայդ:

Յառաջ ֆան զվեց ամիսս գրեցի առ գերապատի Տէրութեան Ձեր՝ վասն զի ֆաղցր է սրտի իմում՝ ի ձեռ[ն] նամակագրութեան սնուցանել զայն ֆրիստոնէական սէրն ի մէջ մեր՝ զոր ինքն Տէրն յառաջագոյն հաստատեաց ի Տփխիս. բայց անյայտ է ինձ՝ եթէ զիր իմ եհաս առ Ձեզ թէ չէ՝ ֆանգի մինչև ցայսօր պատասխանի ոչ եղև ինձ ի Ձէնց:

[2] Բայց և այնպէս սրտիս իղձն շարժէ զիս՝ վերստին յղել Ձեզ նշան ինչ հարազատ սիրոյ և յարգութեան իմոյ՝ որ է առ Ձեզ: Տարցի զայս արժանապատի Տէր Յօհաննէս՝ յորոյ ձեռն և ի Ձէնց յուսամ պատասխանի ընդունել: Ընդ նամակիս այսմիկ դնիմ առաջի Ձեր զմասն իմն թարգմանութեան աւետարանին ըստ Մատթեոսի ի հասարակաց լեզուի՝ աղաչելով զՁեզ՝ զի ֆննեսցիք զնոյն՝ եթէ համաձայն իցէ գրաբառ (այսպէս) օրինակի և ոչ եթէ բացայայտ և իմանալի իցէ ժողովրդոյ ոամկաց: Քանզի Ա[ստուա]ծաշնչոյ ժողովուրդն՝ տեսանելով թէ հասարակ ժողովուրդք ի մէջ հայոց արգելեալ են ի փրկարար իմացօղութենէ Ա[ստուա]ծաշունչ գրոց վասն չիմանալոյ զգրաբառ (այսպէս) լեզուն՝ խորհուրդ արար այժմ զի Նոր Կտակարանն ի հասարակ լեզու թարգմանեսցի և ապա ըստ միաբանութեան առաջնորդացն եկեղեցոյ ի տիպ արկցի: Այս տեսրակս՝ զոր աստ յանդիման առնեմ Ձեզ՝ գրեալ է ըստ ռեին Արար[ա]տեան գաւարաց (այսպէս)՝ այսինքն որ խօսի յերկիրն Էջմիածնի, Նախշևանայ, Սիւնեաց, Արցախայ, Աղուանից, Վրաց և Ռուսաց, վասն զի լեզու օսմանական հայոց այլ է և ի նմին ևս թարգմանութիւն արարեալ է: Ապա խնդրեմ ի Ձէնց՝ զի ֆննեալ զտեսրակ զայս ծանո[ւ]ջիք ինձ՝ եթէ շարադրութիւն նորա իմանալի իցէ յամենայն յերկիրս յայնոսիկ՝ այնպէս զի ամենեցուն օգտակար լիցի:

[3] Բաց ի սմանէ մեծ որախութիւն եղիցի ինձ՝ եթէ և այլ իմաստասէր և ֆրիստոսասէր վարդապետք ընթերցցին զնոյն և զվնիո իւրեանց յայտնեսցեն ինձ: Քանզի բանն Ա[ստուծոյ] է և այսր աղագաւ ամ[ենայն] զգուշութեամբ հարկ է վարել ը[նդ] նմին: Բայց որովհետև նա է լոյսն կենաց՝ նմին իրի պարտ է մեզ ամենեցուն առաջի Աստուծոյ՝ որ զայ դատաւոր մեր՝ զի զլոյս զայս ի մէջ ամենեցուն տարածեսցոյք և ըստ օրինակին սրբոցն Սահակայ և Մեսրոպայ զամենայն ժողովուրդն ի փրկարար գիտութիւն սուրբ գրոց ներածեսցոյք: Դուք սիրէք զագգ Ձեր՝ դուք աշխատեալ էք ի լուսատրութիւն նորա՝ ապա իրաւամբք յուսամ զի և յայսմ գործոյ օգնական եղիջիք ամ[ենայն] կարօղութեամբ Ձերով: Ուրեմն ծանուսցիք ինձ՝ թէ որով եղանակաւ այնպէս ի կատարումն կարէ հասանիլ՝ զի ամենեցուն նշմարիտ օգուտ եղիցի:

Մեծ և հարազատ յարգութեամբ սրտի խնդրեմ մատուցանել սրբազան

Հայրապետին զողջոյն իմ ի Տէր՝ յորմէ և խնդրիմ զի զատուրս կենաց նորս լցուցէ ուրախութեամբ և խաղաղութեամն հոգոյն իւրոյ: Աղաչեմ զի ձեռն Տէր Յօհաննու պատասխանի հանեսջիք գրել ինձ վասն հարցմանց աստ եղելոց՝ զի ուրախ լիցի սիրտ իմ տեսանելով զնշան եղբայրասիրութեան Ձերոյ: Ողջ լեռով ի Քրիստոս: Մնամ գերապատիւ Տերութեան Ձերոս:

Ի բերդս Շուշի, 26 փետրվարի 1829
Խոնարհ եղբայրակից
Օգոստոս Դիարիխեան

HASMIK KIRAKOSYAN

**A RECENTLY DISCOVERED DOCUMENT ABOUT THE ACTIVITY
OF EVANGELICAL MISSIONARIES IN SHUSHI**

Key words: Evangelical Missionary, Shushi, Basel, Gospel, Eastern Armenian language, printing.

In the folder “Shushi” of the archives of the Monastery of the Holy Savior in New Julfa, one can find a document about the activities of the Evangelical Missionary Society of Basel based in Shushi in 1823–1830. The letter is written in Classical Armenian by August Dittrich, a German Evangelical pastor. Dittrich asks Armenian priests to review his Eastern Armenian translation of the Gospel of Matthew, which is attached to the letter, and compare it with the Classical Armenian version. The priest also asks the Catholicos of All Armenians for support and permission to print his manuscript. This unique document provides further information on the linguistic practices of the Evangelical pastors and missionaries based in Shushi, their printing activities and especially their role in the development and dissemination of the Eastern Armenian secular language.

АСМИК КИРАКОСЯН

**НОВОНАЙДЕННЫЙ ДОКУМЕНТ, ОПИСЫВАЮЩИЙ
ДЕЯТЕЛЬНОСТЬ ЕВАНГЕЛИЧЕСКИХ МИССИОНЕРОВ В ШУШИ**

Ключевые слова: Евангелический миссионер, Шуши, Базель, Евангелие, восточноармянский язык, книгопечатание.

В папке «Шуши» архива Храма Святого Всеспасителя Новой Джульфы обнаружен документ о деятельности Базельского евангелического миссионер-

ского общества в Шуши (1823-1830 гг). Письмо написано на грабаре (классическом армянском) немецким евангельским пастором Августом Диттрихом. Диттрих просил армянских священников просмотреть его восточноармянский перевод Евангелия от Матфея, приложенный к письму, и сравнить его с классической армянской версией. Пастор также просил поддержки и разрешения у Католикоса Всех Армян издать рукопись. В документе, содержится дополнительная информация о языковой практике шушинских евангелических пасторов и миссионеров, их издательской деятельности и, в частности, их роли в развитии и распространении восточноармянского языка.

ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԻՍԱՀԱԿԻ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ**



Նկ. 1. «Իսահակի զոհաբերությունը»,
Ավետարանի պատառիկ,
Վիեն. 697 (Ժ դ.), ք. 6բ



Նկ. 2. «Իսահակի զոհաբերությունը»,
Սիմեոն Արեիշեցի, Ավետարան,
ՄՄ 2744 (1305 թ.), ք. 2ա



Նկ. 3. «Իսահակի զոհաբերությունը»,
Զաֆարիա Աղթամարեցի, Ավետարան,
ՄՄ 4923 (1403 թ.), ք. 2. 2ա



Նկ. 4. «Իսահակի զոհաբերությունը»,
Հովհաննես Խիզանցի, Ավետարան,
ՄՄ 5444 (1417 թ.), ք. 2բ



Նկ. 5. «Իսահակի զոհաբերությունը»,
Կարապետ Բերկրեցի, Ավետարան,
ՄՄ 4778 (1462 թ.), թ. 2



Նկ. 6. «Իսահակի զոհաբերությունը»,
Մարգարե, Ավետարան,
ՄՄ 2930 (1315 թ.), թ. 15բ



Նկ. 7. «Իսահակի զոհաբերությունը»,
Իսրայել Մաղկող, Ավետարան,
ՄՄ 10839 (ժէ դ.), թ. 4ա



Նկ. 8. «Իսահակի զոհաբերությունը»,
Ավետիս, Ավետարան,
ՄՄ 6325 (ժԶ դ.), թ. 5բ

ՍԵԴԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԲՈՒՆԱՇԷՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ՄԻ ՕՐԻՆԱԿ



Նկ. 1. ՄՄ 4123, Աւետարան,
1466 թ., Բոնաշէն գիւղ, գրիչ՝ Մխիթար



Նկ. 2. Ձեռ. Հմբ 76, Աւետարան, 1490 թ., գրիչ՝ Առաքել,
Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրատուն



Նկ. 3. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ.
հետո, գրիչ՝ Առաքել, Աբրահամի
զոհաբերութիւնը



Նկ. 4. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաքել,
Աւետում, 4բ. Մասնատր հավաքածու, Աւետարան,
1477 թ., գրիչ՝ Մխիթար, ծաղկող՝ Առաքել, Աւետում





Նկ. 5. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաֆել, Հոգեգալուստ և Համբարձում



Նկ. 6. ՄՄ 10789, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաֆել, Ծնունդ



Նկ. 7. ՄՄ 4223, Աւետարան, Խիզան, Ծնունդ



Նկ. 8ա. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաֆել, Հարսանիքի Կանայում



Տբ. ՄՄ 5511, Աւետարան, Հարսանիքի Կանայում



Նկ. 9. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաֆել, Ազգարարումն Երկրորդ գալուստեան



Նկ. 11. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաֆել, լուսանցանկարներ




Տդ. Մասնատր հավաքածու, Աւետարան, 1477 թ., գրիչ՝ Միսիբար, ծաղկող՝ Առաֆել, Հարսանիքի Կանայում




Նկ. 10. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաֆել, Յարութիւն




Ձեռագիր LA 152 – Աստվածաշունչ



թ. 1




թ. 1211



թ. 1211




թ. 2




թ. 6




թ. 1212




թ. 1210



թ. 1211




թ. 270



թ. 271

Ձեռագիր LA 216 – Ավետարան



թ. 91բ



թ. 141բ

դեր օրինակի՝ Որև
 գրեցաւ սախեղի
 րս ապազանի ի
 յէջր Կարճիդ
 լայնի որասի թոր
 լական ձեռամբ
 ոգնամեղ անարձ
 քասպար երիցի
 որ եզանունս իմ
 եպարծւոյ ոչ յէ
 ցեպ ի յերկնաբա
 ցիք յաղօթածէր

թ. 262բ

Գրուեցաւ ի
 թոսականիս մեր
 ի ձէլէ Կիթարե
 մերոյ շահտակ
 մանին Կիթայ
 ըսպէտ ում ձէլ
 ան եղի աղարոս
 որ սոյն մամի նըս
 տաւ ի յաթորո
 հայկազան սե
 տիս ի սքնի Կիթայ
 ծին որեւմ խան
 սասան պահէս

թ. 263ա

Ձեռագիր LA 253 – Ավետարան

Յիշատակէ սբ իսաչս
 օղանէ սին և կողակից
 Կիզար խաթուհին։
 Վրն ում կր թ

թ. 2ա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցիև և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակները
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի 350

ԲԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման
պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էննա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Northern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II Vkeyaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘ 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Азат Бозоян	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
Карен Матевосян	
Антикатоликос румского султаната Анания.....	22
Гагик Даниелян	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
Элина Казарян	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
Георгий Мирзабекян	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г.	74
Айказ Оганесян	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

ФИЛОЛОГИЯ

Давид Геворгян	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
Донара Карапетян	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
Анна Оганджян	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

ИСКУССТВО

Авет Аветисян	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
Седа Манукян	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
Анна Аревшатян	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса.....	212

ПУБЛИКАЦИИ

Ани Аракелян

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

Лусине Туманян

Гандзы и таги Ованеса Бргутенца 268

Асмик Киракосян

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши 295

Мигран Минасян

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах 321

Татевик Манукян, Кнарлик Саргсян

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

Эрмине Григорян

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне 350

ДИСКУССИЯ

Нарине Варданян

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? 377

СООБЩЕНИЕ

Манеа Эрна Ширинян

XXIV всемирный конгресс византинистов 420

НЕКРОЛОГ

Назени Гарибян

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/